

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐ. ՀԱԿՈԲՅԱՆ.—ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964, 297 էջ

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է բերում Գր. Հակոբյանի «Ներսես Շնորհալի» խորագիրը կրող հետաքրքրական մենագրությունը: Հեղինակը բավական հանգամանորեն վերլուծել է հայ միջնադարի ականավոր գիտնական, կրոնական ու քաղաքական գործիչ Ներսես Շնորհալու կյանքն ու գործունեությունը, ինչպես նաև նրա գրական հարուստ ու բազմաբովանդակ ժառանգությունը:

Ներսես Շնորհալին հայ միջնադարի ականավոր դեմքերից մեկն է: Նա հանդես եկավ պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ Մեծ Հայաստանը սելջուկների հարվածներից կորցրել էր իր պետականությունը, իսկ բնակչությունը մայր հայրենիքից հեռացած ապաստարան էր գտել Փոքր Ասիայի, հատկապես Տավրոսյան լեռների անառիկ վայրերում:

Կիլիկիա փոխադրված հայերը աստիճանաբար կուտակվելով ստեղծում են մի քանի կիսանկախ ֆեոդալական իշխանություններ: Դրանցից առավել աչքի էին ընկնում Փիլարտոս Վարաժնունու Անտիոքում, Վասակ իշխանի Մովքում, Սենեբերիմ Արծրունու Կապադոկիայում, Թաթուլ իշխանի Մարաշում, Գաբրիել իշխանի Մելիտինոսում, Գող Վասիլի Ինսունիում, Աբլղարիբ Արծրունու Համբրոնում ստեղծած հայկական մանր ֆեոդալական իշխանությունները:

Այս հայկական կիսանկախ, իսկ երբեմն էլ բոլորովին անկախ ֆեոդալական իշխանությունների շուրջ՝ աստիճանաբար սկսում են համախմբվել մեծ քանակությամբ հայ բնակչություն: Ահա այստեղ փոխադրվում է նաև հայոց կաթողիկոսարանը, որը սկզբից բնակություն էր հաստատել Մովքում, իսկ հետո՝ Հռոմիլայում: Հայերի թիվը բյուզանդական կայսրության մեջ աստիճանաբար բազմապատկվում էր կայսրության նենգ քաղաքականության հետևանքով, որը հայ ռազմական ուժերին երկրից հանելով, երկու նպատակ էր հետապնդում: Նախ թուլացնել Մեծ Հայքի ֆեոդալների ռազմական ուժերը, երկրորդ հեշտությամբ նվաճելու և այն կայսրության պրովինցիա դարձնելու համար. երկրորդ հայկական ռազմական ուժերը փոխադրելով կայսրության ծայրամասերը, դրանով իսկ ամրապնդում էին իրենց ինքնավարության սահմանները:

Կիլիկիա փոխադրված հայկական այն ռազմական ուժերը, որոնք տեղավորված էին Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում, ամրացնելով իրենց դիրքերը ձգտում էին ինքնուրույնության:

Հայկական մանր իշխանությունների շարքերը Կիլիկիայում ավելի է խտանում, երբ թուրք-սելջուկյան ցեղերի վայրագություններից խուսափելով բազմաթիվ հայ բնտանիքներ փոխադրվում էին Կիլիկիա և ապաստան գտնում իրենց հայրենակիցների տիրույթներում: Հետագայում այդ հայկական մանր իշխանությունները աստիճանաբար հզորանալով միավորվեցին, օգտագործելով

կայսրության թուլությունը՝ իրենց անկախ թագավորություն հռչակեցին։ Սոցիալ-քաղաքական ու պատմական այս նոր միջավայրում թափ է առնում հայ մշակույթի զարգացումը։

Այստեղ ստեղծվեցին գիտության և մշակույթի բազմաթիվ հայկական օջախներ՝ Տարսուհի, Սսի, Դրաղարկի, Կարմիր վանքի, Ակների, Բարձրբերդի հայկական գպրոցներում և ուսումնական այլ հիմնարկությունները մեծ դեր խաղացին հայ մշակույթի զարգացման ու բարգավաճման գործում։ Շատ հայ մտավորականներ, ինչպես Մեծ Հայքից, այնպես էլ հայաբնակ այլ վայրերից գնում էին Կիլիկիա սովորելու և իրենց գիտելիքներն այնտեղ կատարելագործելու համար։

Ահա այս միջավայրում էր, որ հանգես եկավ հայ ժողովրդի բազմավատակ գիտնական, ականավոր քաղաքական ու կրոնական գործիչ Ներսես Շնորհալին, որին և նվիրված է սույն մենագրությունը։

Ներսես Շնորհալու գրական ժառանգության վերաբերող ուսումնասիրություններ շատերն են գրել. դրանցից կարիլի է հիշատակել Ղևոնդ Ալիշանին («Շնորհալին և պարագա իւր»), Զարբանալյանին («Հայկական հին գալուսթիւն»-ը), Օրմանյանին («Ապագատում»), Մանուկ Աբեղյանին («Հայոց հին գրականության պատմություն») և ուրիշներին։

Բայց Գր. Հակոբյանը կարողացել է ի մի բերել Շնորհալու գիտության վերաբերյալ վերջին նվաճումները, նա զարգացրել է շնորհալիագիտությունը, բարձրացրել է այն մի նոր աստիճանի։ ՆՔԵ նախասովետական բանասերներից շատերը ուսումնասիրելով Ն. Շնորհալու թողած գրական ժառանգությունը, շեշտը դնում էին նրա կրոնական գործերի վրա, ապա հեղինակը իրավացիորեն կանգ է առնում նրա գործերի, հատկապես աշխուրհիկ նշանակության վրա։ Հեղինակը խիստ քննադատության է ենթարկում կաթոլիկ-հայազետ Կղեմես Կալանոսին և նրա համախոհներին, այն բանի համար, որ վերջիններս աշխատել են Ներսես Շնորհալուն դուրս բերել, ոչ թե հայ մշակույթի ներկայացուցիչ, այլ հույների գործակալի, որը իբր թե նպատակ է ունեցել հայ եկեղեցին միացնել հունական կրոնին։ Այս անհիմն տեսակետը իր արտահայտությունն է գտել Ղևոնդ Ալիշանի, Ա. Խուդաբաշևի և այլոց երկերում։ Հեղինակը նոր հայտնաբերված նյութերի հիման վրա, իրավացիորեն մերկացնում է այդ հակադիտական տեսակետները և դատապարտում է բոլոր նրանց, ովքեր իրենց սխալ տեսակետներով ստվեր են ձգել Ներսես Շնորհալու ստեղծագործությունների և նրա քաղաքական գործունեության վրա։

Մենագրության հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև Ն. Շնորհալու իրկերում արժարժված սոցիալական շարժումների մասին եղած նյութերը, որտեղ նա կանգ է առնում հատկապես «Արևորդյաց» աղանդի բնութագրման հարցին։ Ճիշտ կերպով այն կապում է թոնդրակեցիների աղանդի հետ, մի շարժում, որոնց արմատները տարածված են եղել մինչև Կիլիկիա։

Գր. Հակոբյանը Ներսես Շնորհալուն իրավացիորեն բնութագրել է որպես իր դարաշրջանի մեծ մտածողի, ցույց տալով նրան որպես պոետի, բանաստեղծի, մանկավարժի, մի հումանիստ գործչի, որի նպատակն է եղել համախմբել հայ ժողովրդին, արթնացնել նրանց մեջ ազգային ինքնագիտակցության գաղափարը և հայրենիք վերադարձնելով՝ պայմաններ ստեղծել հայ պետականությունը վերստին վերականգնելու համար։ Որպեսզի դրանով իսկ Շնորհալու խոսքով ասած հայ ժողովրդին փրկել «ի բերանոյ առիւծուց»։ «Ազատել

զղերեալսն ի տանէ կապանսց, որք նստին ի խաւարի»: Այս բոլորը այն բանի համար, որ հայ ժողովրդի հոծ մասսաներն «դարձուցանել զամենեւեան յաշխարհն հայրենի» («Քուղթ», էջ 307): Շնորհալու այս առաջադիմական նպատակները վեր է հանված մենագրության մեջ ամենայն մանրամասնությամբ:

Գր. Հակոբյանի մենագրության արժանիքներից մեկն էլ այն է, որ նա ոչ միայն աշխարհիկ գործերի, այլ նաև շարականների մեջ ևս կարողացել է տեսնել նրա ժողովրդական բնույթը: Այդ տեսակետից նա բաղմալիողմանի է վերլուծել հատկապես նրա «Առաւօտ լուսոյ» երկը, նշելով, որ հեղինակի խոսքերով ասած թո՛ղ մի շարական կամ տաղ, հրեք այսպես մասսայական չէ դարձել ժողովրդի համար: Սա երկվի է թե տխրության և թե ուրախության ժամերին. առավոտյան ու երեկոյան, Լիկեցեցում և դրսում, հարսանիքներում, հանդեսներում ու խնջույքներում» (էջ 115): Այսպիսով, Գր. Հակոբյանին հաջողվել է ի մի բերել, ամբողջացնել ներսես Շնորհալու բոլոր գործերը և սալ նրա երկերի ամբողջական պատկերը:

Դրախոսվող աշխատությունը զերծ չէ նաև թերություններից և ճշգրտման կարոտ հարցադրումներից, որի առթիվ հարկ ենք համարում մի քանի դիտողություններ անել:

Հեղինակը բավականին մանրամասն անդրադառնում է ներսես Շնորհալու սյունների վերլուծությանը: Հանգամանորեն խոսում է Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պատմական սյունի մասին, ճիշտ կերպով գտնելով, որ այն «Շնորհալու չափածոյի սյունն է. նրա գլուխ-գործոցը» (էջ 190):

Բայց ինչու՞մ է կայանում այդ չափածոյի «սյուն» լինելու հանգամանքը, այդ հարցը բավարար խորությամբ չի լուսաբանված մենագրության մեջ: Հեղինակը պոեմը վերլուծում է միայն 1244—1245 թթ. իրադարձությունների՝ Հալեպի էմիրի կողմից Եղեսիա քաղաքը գրավելու և ավերելու կապակցությամբ:

Մեր կարծիքով Շնորհալու նույատակն է եղել, ոչ թե սոսկ ողբալ Եղեսիայի սովերումը, այլ այդ պատմական եղելությունը հիմք ընդունելով, օգտագործելով առիթը ողբացել է մայր Հայաստանի քաղաքների կործանումը թուրք-սելջուկյան բարբարոս հորդանների կողմից: Այդ է պատճառը, որ Շնորհալին իր սյունի մեջ հիշատակում է «Եւ Վարդանանց պատերազմին» («Ողբ», էջ 44) և «Արևելյան քաղաքդ Անի» և բաղմաթիվ այլ քաղաքներ ու իրադրություններ, որոնք կապված են Մեծ Հայքի հետ: Հայրենիքի համար զոհվածների մասին Շնորհալին գրում է, որ «Բայց դուք որդիք իմ սիրելիք

Ձեք ինձ մեղեալ, այլ կենդանիք»:

Եվ վերջապես մեծ հումանիստը խնդիր է դնում, որ հայրենիք վերադարձնեն բոլոր այն հայերին, «Որք ցրուեցայք յամեն կողմանց, Զորեքծագեան տիեզերաց» («Ողբ», էջ 102): Այնտեղ նրանք հալածվում են և արհամարհվում, իսկ հայրենիքում նրանք կբարգավաճեն: Ահա թե ինչ է նա գրում.

«Գան ժողովին յամեն կողմանց,
Ուր հալածեալ են ու ցրուած:

Յայնժամ որդիք իմ հեռացած
Որք այժմ յինէն էք բաժանած
Գայք ի վերայ բարձեալ կառաց» («Ողբ», էջ 103):

Այս էլ այն իսկական դրդապատճառը, որ Շնորհալին դրել է իր այդ հանրահռչակ պատմական պոեմը, որը իր գեղարվեստական կատարողությամբ պատմա-փիլիսոփայական ընդհանրացումներով և զակի գործ է հայ միջնադարի էպիկական գրականության պատմության մեջ:

Մենագրության հեղինակը բավականին հանգամանորեն վերլուծում է նաև Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»: Այս կապակցությամբ նա խոսում է նրա մանկավարժական, ուսումնա-դաստիարակչական կողմերի մասին, որը վրիպել էր մեր հայ բանասերների ուշադրությունից: Բայց այստեղ հեղինակի թերությունն այն է, որ չի անդամալուծել այդ փաստաթղթի իրավական կողմի վրա: Պետք է իմանալ, որ Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» հայ իրավական մտքի պատմության առաջնակարգ փաստաթղթերից մեկն է: Միջնադարի հայ իրավագետները՝ Մխիթար Գոշը, Սմբատ Սյարապետը և ուրիշներ իրենց Դատաստանագրքերը կազմելիս աշխարհիկ հոգևածների մեծ մասը վերցրել են Շնորհալու «Թուղթ ընդհանրականից»: Պատահական չէ, որ մեր բոցաշունչ ուսուցիչներ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը («Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948, հ. 2, էջ. 37») և բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը («Հայ հին գրականության պատմություն», հ. Բ, էջ 121) «Թուղթ ընդհանրականը», որպես հայ ժողովրդի իրավական մտքի պատմության լավագույն աղբյուրի բարձր են գնահատել: Մենագրությունը ավելի կշահեր, եթե հեղինակը ինքն առնել «Թուղթ ընդհանրականի» պատմա-իրավագիտական հարցերի վրա:

Գրախոսվող աշխատության մեջ կան նաև փաստական սխալներ: Այսպես, օրինակ՝ ձիշտ չէ հեղինակի այն կարծիքը, թե ներսես Շնորհալին եղել է ներսես Համբրոնացու պապը (էջ 24): Թորոս Բ իշխանի փեսան ոչ թե Օշինի էր, ինչպես գրում է Գր. Հակոբյանը (էջ 50, ծանոթ. 1), այլ Հեթումը՝ Օշինի կրտսեր որդին: Սխալ է նաև հեղինակի այն կարծիքը, թե ներսես Համբրոնացին Կիլիկիայում կազմել է «Զինվորական օրենսգիրքը» (էջ 38):

Դա ճիշտ չէ: Այդ իրավագիտական հուշարձանները ոչ թե կազմված է ներսես Համբրոնացու կողմից, այլ թարգմանություն է հունարենից: Ճիշտ չէ հեղինակը, երբ գրում է, թե Մովսես, որտեղից Հայրապետական աթոռը փոխադրել են Հոռմկլա, գտնվում էր «Կիլիկիայի Մարաշ գավառում» (էջ 27): Մարաշը գտնվում է Կիլիկյան Հայկական թագավորության մեջ Բերդուսից հարավ: Իսկ Մովսես չէր մտնում Կիլիկիայի սահմանի մեջ: Այն գտնվում էր Տիգրիսի հովտում Մելիտենից հյուսիս-արևելք: Մի ուրիշ անձնություն: Հայոց կաթողիկոս արաբի փոխադրվել է Կիլիկիա ոչ թե 1295 թ., ինչպես ցույց է տալիս հեղինակը (էջ 46), այլ 1293 թ.: Ստեփանոս կաթողիկոսի օրոք: Մեզ դուր չի գալիս հեղինակի «Արևելյան Հայաստան» (էջ 43), «Բուն Հայաստան» (55), «Մայր Հայաստան» (18) արտահայտությունները. դրանք շինծու տերմիններ են և շփոթություն են առաջ բերում հայագիտության մեջ: Ներսես Շնորհալին ինքը անվանում է «Մեծ Հայք» («Թուղթ ընդհանրական», էջ 147), այդպես էլ կարելի է անվանել: Պատմական գրականության մեջ ընդունված է նաև ասել «Մեծ Հայաստան»:

Մեր այս դիտողությունները չեն կարող նսեմացնել հեղինակի երկարամյա ու տքնաշան աշխատանքը: Գր. Հակոբյանը մեծ ու շնորհակալ գործ է կատարել:

ԱՆՈՏ ԴԱՍՏՅԱՆ